CONVERSE BANK

ՀՀ և միջազգային շուկաներում ներդրումային ծառայություններ

Տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 21.03.2025թ.

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) ֆիզիկական (ներառյալ՝ անհատ ձեռնարկատեր) և իրավաբանական անձանց համար մատուցում է հետևյալ ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

- ներդրողներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
- ներդրողի անունից և ներդրողի հաշվին արժեթղթերով գործարքների իրականացում ՀՀ կարգավորվող և չկարգավորվող, ինչպես նաև միջազգային ֆինանսական շուկաներում,
- հաճախորդների սպասարկում ՀՀ պետական/կորպորատիվ պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաներում,
- հաճախորդների հայտերի ներկայացում ՀՀ-ում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի տեղաբաշխման առաջնային աճուրդներին,
- արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում,
- արժեթղթերի փաթեթի կառավարում,
- արժեթղթերի երաշխավորված տեղաբաշխման իրականացում,
- արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացում,
- քաղվածք-հաշվետվության տրամադրում արժեթղթերի վերաբերյալ:

Պայմաններ	
Բրոքերային հաշվի բացում	**0 ՀՀ դրամ**
Միջոցների մուտքագրում/ելքագրում	**0 ՀՀ դրամ**
Ծածկագրային քարտի թողարկում	**0 ՀՀ դրամ**

ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅՔՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ				
Բաժնետոմսեր և դեպոզիտար ստացականներ (STOCK, ADR, ETF, CFD)				
Հյուսիսային Ամերիկա	**Քանակ**	**Միջնորդավճար**	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
ԱՄՆ (USA)	<=15,000 հատ	USD 0.02՝ յուրաքանչյուր արժեթղթի համար	USD 10	2% ծավալից
	>15,000 հատ	USD 0.015՝ յուրաքանչյուր արժեթղթի համար	USD 10	2% ծավալից
Կանադա	<=30,000 հատ	CAD 0.03՝ յուրաքանչյուր արժեթղթի համար	CAD 15	2% ծավալից
	>30,000 հատ	CAD 0.02՝ յուրաքանչյուր արժեթղթի համար	CAD 15	2% ծավալից
Մեքսիկա	գործարքի ծավալ <=250,000 MXN	MXN 0.3%՝ գործարքի ծավալից	MXN 150	-
	գործարքի ծավալ >250,000 MXN	MXN 0.25%՝ գործարքի ծավալից	MXN 150	-
Եվրոպա	**Քանակ** *(գործարքի ծավալ)*	**Միջնորդավճար** *(գործարքի ծավալից)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
Ավստրիա	<=40,000 EUR	EUR 0.25%	EUR 10	-
	>40,000 EUR	EUR 0.2%	EUR 10	-
Բելգիա	<=40,000 EUR	EUR 0.25%	EUR 10	-
	>40,000 EUR	EUR 0.2%	EUR 10	-
Ֆրանսիա	<=40,000 EUR	EUR 0.25%	EUR 10	-
	>40,000 EUR	EUR 0.2%	EUR 10	-
Գերմանիա	<=40,000 EUR	EUR 0.25%	EUR 10	-
	>40,000 EUR	EUR 0.2%	EUR 10	-

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել Բանկի հետ:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից:

Իտալիա	<=40,000 EUR	EUR 0.25%	EUR 10	-
	>40,000 EUR	EUR 0.2%	EUR 10	-
Նիդերլանդներ	<=40,000 EUR	EUR 0.25%	EUR 10	-
	>40,000 EUR	EUR 0.2%	EUR 10	-
Իսպանիա	<=40,000 EUR	EUR 0.25%	EUR 10	-
	>40,000 EUR	EUR 0.2%	EUR 10	-
Շվեդիա	<=250,000 SEK	SEK 0.25%	SEK 100	-
	>250,000 SEK	SEK 0.2%	SEK 100	-
Շվեյցարիա	<=50,000 CHF	CHF 0.25%	CHF 15	-
	>50,000 CHF	CHF 0.2%	CHF 15	-
Մեծ Բրիտանիա[1]	<=50,000 GBP	GBP 0.2%	GBP 12	-
	>50,000 GBP	GBP 0.15%	GBP 12	-
Ասիա	**Քանակ** *(գործարքի ծավալ)*	**Միջնորդավճար** *(գործարքի ծավալից)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
Ավստրալիա	<=30,000 AUD	AUD 0.25%	AUD 15	-
	>30,000 AUD	AUD 0.2%	AUD 15	-
Հոնկոնգ	<=55,000 HKD	HKD 0.25%	HKD 100	-
	>55,000 HKD	HKD 0.2%	HKD 100	-
Ճապոնիա	<=2,500,000 JPY	JPY 0.25%	JPY 1500	-
	>2,500,000 JPY	JPY 0.2%	JPY 1500	-

✓ Սույն միջնորդավճարները ներառում են բրոքերի գործընկերների, առևտրային հարթակների և կարգավորող մարմինների կողմից գանձվող վճարները (exchange and regulatory fees):

✓ Ծավալը առքի և վաճառքի գինն է՝ բազմապատկած քանակով:

[1]*0,5% Մեծ Բրիտանիայի զինանշանի հարկը (stamp taxes) գումարվում է միջնորդավճարին*

Ֆյուչերսներ և ֆյուչերսային օպցիոններ (futures and futures options)

Հյուսիսային Ամերիկա	**Քանակ** *(պայմանագիր)*	**Միջնորդավճար** *(յուրաքանչյուր պայմանագրի համար)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
ԱՄՆ (USA)	<=20	USD 7	-	-
	>20	USD 6	-	-
Կանադա	<=20	CAD 10	-	-
	>20	CAD 8	-	-
Եվրոպա	**Քանակ** *(պայմանագիր)*	**Միջնորդավճար** *(յուրաքանչյուր պայմանագրի համար)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
Բելգիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Նիդերլանդներ, Իսպանիա	<=15	EUR 10	-	-
	>15	EUR 8	-	-
Շվեյցարիա	<=15	CHF 15	-	-
	>15	CHF 12	-	-
Մեծ Բրիտանիա	<=15	GBP 7	-	-
	>15	GBP 6	-	-
Ասիա	**Քանակ** *(պայմանագիր)*	**Միջնորդավճար** *(յուրաքանչյուր պայմանագրի համար)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
Ավստրալիա	<=10	AUD 15	-	-
	>10	AUD 12	-	-
Հոնկոնգ	<=10	HKD 100	-	-
	>10	HKD 90	-	-
Ճապոնիա	<=10	JPY 1000	-	-
	>10	JPY 900	-	-

Օպցիոններ (options)

Հյուսիսային Ամերիկա	**Քանակ** *(պայմանագիր)*	**Միջնորդավճար** *(յուրաքանչյուր պայմանագրի համար)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
ԱՄՆ (USA)	<=25	USD 6	-	-
	>25	USD 5	-	-

Կանադա	<=25	CAD 9	-	-
	>25	CAD 8	-	-
Մեքսիկա	<=25	MXN 150	-	-
	>25	MXN 120	-	-
Եվրոպա	**Քանակ** *(պայմանագիր)*	**Միջնորդավճար** *(յուրաքանչյուր պայմանագրի համար)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
Ֆրանսիա	<=20	EUR 10	-	-
	>20	EUR 8	-	-
Գերմանիա	<=20	EUR 10	-	-
	>20	EUR 8	-	-
Իտալիա	<=20	EUR 10	-	-
	>20	EUR 8	-	-
Նիդերլանդներ	<=20	EUR 10	-	-
	>20	EUR 8	-	-
Իսպանիա	<=20	EUR 10	-	-
	>20	EUR 8	-	-
Շվեդիա	<=20	SEK 100	-	-
	>20	SEK 80	-	-
Շվեյցարիա	<=20	CHF 10	-	-
	>20	CHF 8	-	-
Մեծ Բրիտանիա	<=25	GBP 8	-	-
	>25	GBP 6	-	-
Ասիա	**Քանակ** *(պայմանագիր)*	**Միջնորդավճար** *(յուրաքանչյուր պայմանագրի համար)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
Ավստրալիա	<=20	AUD 15		
	>20	AUD 12		
Հոնկոնգ	<=25	HKD 80		
	>25	HKD 70		
Ճապոնիա	<=25	JPY 1200		
	>25	JPY 900		

Պարտատոմսեր (ռեզիդենտ)				
	Քանակ	**Միջնորդավճար** *(գործարքի ծավալից)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
ԱՄՆ (USA)	500,000 և ավել	USD 0.03%	USD 50	-
Եվրոպա	500,000 և ավել	EUR 0.03%	EUR 50	-
Պարտատոմսեր (ոչ ռեզիդենտ)				
	Քանակ	**Միջնորդավճար** *(գործարքի ծավալից)*	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
ԱՄՆ (USA)	500,000 և ավել	USD 0.04%	USD 100	-
Եվրոպա	500,000 և ավել	EUR 0.04%	EUR 100	-

ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅՔՆԵՐ ՀՀ ՇՈՒԿԱՅՈՒՄ			
Քանակ	**Միջնորդավճար**	**Նվազագույնը**	**Առավելագույնը**
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր առաջնային շուկայում			
Մինչև 100 մլն ՀՀ դրամ	0.03% + կարգավորող շուկայի կիրառվող սակագին	3,000 ՀՀ դրամ	-
100 մլն - 200 մլն ՀՀ դրամ	0.02% + կարգավորող շուկայի կիրառվող սակագին		
200 մլն ՀՀ դրամ և ավել	0.01% + կարգավորող շուկայի կիրառվող սակագին		
ՀՀ պետական գանձապետական պարտատոմսեր երկրորդային շուկայում			
Մինչև 100 մլն ՀՀ դրամ	0.03% + կարգավորող շուկայի կիրառվող սակագին	3,000 ՀՀ դրամ	-
100 մլն - 200 մլն ՀՀ դրամ	0.02% + կարգավորող շուկայի կիրառվող սակագին		
200 մլն ՀՀ դրամ և ավել	0.01% + կարգավորող շուկայի կիրառվող սակագին		

ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթեր[2]			
-	0.03% + կարգավորող շուկայի կիրառվող սակագին	1,000 ՀՀ դրամ *(ֆիզիկական անձիք)* 5,000 ՀՀ դրամ *(իրավաբանական անձիք)*	-

[2] *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի համար միջնորդավճար չի գանձվում*

Միջնորդավճարները գանձվում են ներդրողի հաշիվներից ֆինանսական գործարքն իրականացնելու պահին: Դրամային համարժեքը յուրաքանչյուր արժույթի համար որոշվում է հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

ՀՀ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ				
Ներդրող	**ՀՀ շուկա**			**Միջազգային շուկա**
	Պետական գանձապետական պարտատոմսեր		Կորպորատիվ պարտատոմսեր	
	Առաջնային շուկա	**Երկրորդային շուկա**		
Ֆիզիկական անձ	Min 1,000,000 ՀՀ դրամ	Min 1,000,000 ՀՀ դրամ	Առանց սահմանափակման	10,000 ԱՄՆ դոլար
Իրավաբանական անձ	Min 10,000,000 ՀՀ դրամ			

Լևերիջով կատարվող գործարքների սահմանաչափ		
Ներդրող	**Լևերիջ**	**Մարժա**
Ռեզիդենտ	Max 1:100	5,000,000 ՀՀ դրամ
Ոչ ռեզիդենտ	Max 1:200	2,500,000 ՀՀ դրամ

Այլ պայմաններ

- Ներդրումային ծառայություններից օգտվելու համար ներդրողը պետք է ունենա Բանկում բացված հաշվարկային կամ ընթացիկ հաշիվ: Պայմաններ և սակագներ՝ https://conversebank.am/hy/open-account/:
- Հաճախորդը պետք է Բանկում ունենա (չունենալու դեպքում բացի) ՀՀ Պետական պարտատոմսերի դեպո հաշիվ: Պայմաններ և սակագներ՝ https://conversebank.am/hy/depositoryindividual/:
- Կորպորատիվ պարտատոմսերով և այլ արժեթղթերով ծառայություններ ստանալու համար հաճախորդը պետք է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում (այսուհետ՝ ՀԿԴ) կամ այլ որևէ հաշվի օպերատորի մոտ ունենա դեպո հաշիվ:
- Բանկի և հաճախորդի միջև կնքվում է ծառայությունների մատուցման անժամկետ պայմանագիր:
- Կնքված պայմանագրի դադարեցման դեպքում սպառողի արժեթղթերը պահպանվում են իր արժեթղթերի հաշվին, ուստի պայմանագրի խզման դեպքում Բանկի կողմից գումարի հետվերադարձի անհրաժեշտություն չի առաջանում:

Բանկը նույնպես հանդիսանում է հաշվի օպերատոր, բացում և սպասարկում է դեպո հաշիվներ՝ ՀԿԴ կանոններով սահմանված կարգով, կնքելով ՀԿԴ հետ Պահառության պայմանագիր: Պայմաններ և սակագներ՝ https://conversebank.am/hy/depositoryindividual/:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ հիմնական պայմաններ՝ *https://conversebank.am/hy/Basicconditions/*

Արժեթղթերի տեսակներ

Գործարքներն իրականացվում են ստորև ներկայացված հիմնական և ածանցյալ ֆինանսական գործիքներով.

- բաժնետոմսեր,
- պարտատոմսեր, մուրհակներ,
- օպցիոններ,
- ֆյուչերսներ, ֆորվարդներ,
- ներդրումային հիմնադրամների արժեթղթեր և նմանատիպ ածանցյալ արժեթղթեր,

- պետական և համայնքային պարտատոմսեր,
- արժութային պայմանագրեր և նմանատիպ ածանցյալ արժեթղթեր,
- այլ գործիքներ:

Բաժնետոմսը սահմանված ձևի և բովանդակության գրավոր փաստաթուղթ է, որը վկայում է բաժնետիրական ընկերության կապիտալում որոշակի մասնաբաժին ներդնելու մասին:

Բաժնային արժեթղթերից (օրինակ՝ սովորական բաժնետոմսերից) ակնկալվող եկամտաբերությունը զգալիորեն ավելի բարձր է, սակայն այդ եկամտաբերությունը տարբեր ժամանակահատվածներում դրսևորում է բարձր տատանողականություն: Նպատակահարմար է երկարաժամկետ ներդրումային հորիզոնի համար:

Պարտատոմսը պարտքային պարտավորվածություն է՝ սահմանված ժամկետը լրանալուց հետո ներդրված դրամական միջոցների վերադարձմամբ, որոշակի տոկոսագումարի վճարմամբ:

Պատմականորեն տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի (օրինակ՝ պարտատոմսերի) հիմնական առավելությունը ներդրվող կապիտալի համեմատական կայունությունն է, որն ապահովվում է կապիտալի երկարաժամկետ իրական աճի ավելի ցածր հնարավորությունների գնով՝ պայմանավորված նման արժեթղթերի ինֆլյացիոն խոցելիությամբ:

Ածանցյալ արժեթղթերը և ապրանքային ֆյուչերսները համարվում են առավել ռիսկային՝ որպես առանձին ակտիվների կատեգորիա: Այնուամենայնիվ, դրանք ապահովում են հեջավորման և դիվերսիֆիկացիայի հնարավորություններ՝ պարտատոմսերի և բաժնետոմսերի հետ համախմբելու դեպքում.

Ֆյուչերս՝ երկու կողմերի միջև համաձայնություն է, պայմանագրի հիմքում ընկած ակտիվը ապագայում գնելու կամ վաճառելու վերաբերյալ՝ նախօրոք համաձայնեցված ծավալով և գնով: Կարճաժամկետ հորիզոնում տվյալ գործիքում ներդրումը պարունակում է մեծ գումար կորցնելու հավանականություն:

Օպցիոն՝ պայմանագիր, երբ ներդրողը ստանում է իրավունք (ոչ պարտավորություն) գնել կամ վաճառել պայմանագրի հիմքում ընկած ակտիվը որոշակի պարգևավճարի դիմաց: Օպցիոնը հնարավորություն է տալիս հեջավորել ակտիվի գնի տատանումների հետ կապված ռիսկերը:

Ներդրումային ծառայությունների հետ կապված հնարավոր ռիսկեր

Ֆինանսական գործիքներով իրականացվող գործառնությունները կապված են որոշակի ռիսկերի հետ: Նախքան ներդրում կատարելու մասին որոշում կայացնելը, անհրաժեշտ է հաշվի առնել նշված ռիսկերը, ինչպես նաև անձնական փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ շուկայում տիրող իրավիճակի վրա և բերել ակտիվների գնի կամ իրացվելիության անկման, որի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել, որ ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ոչ միայն թողարկողի ֆինանսատնտեսական վիճակի և գործունեության արդյունքի (թողարկողի ռիսկ), այլ նաև ֆինանսական շուկայում տիրող իրավիճակի (շուկայական ռիսկ) հետ: Ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ոչ բոլոր ռիսկերն են, որ երբևէ կարող են ի հայտ գալ: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Բանկն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել նշված ազդեցությունն ու հետևանքը:

Նախքան ներդրում կատարելու մասին որոշում ընդունելն անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել ներկայացված ռիսկերն ու այլ տեղեկատվությունը:

Անհրաժեշտ է նաև խորհրդակցել իրավաբանի հետ՝ կատարվող ներդրման իրավաբանորեն թույլատրելի հանդիսանալու փաստը և ներդրումները տարբեր փոխառությունների համար որպես գրավի առարկա օգտագործվելու հնարավոր դեպքերը պարզելու համար:

Ներդրում կատարելիս առաջ եկող ռիսկերն են.

- Շուկայական ռիսկ՝ կապված շուկայական փոփոխականների (տոկոսադրույք, արտարժույթ, գին) կտրուկ տատանումների հետ, որոնք բավական հաճախ են տեղի ունենում ֆինանսական շուկաներում և չեն գտնվում

Բանկի հսկողության տակ, կարող են գործել ինչպես ի օգուտ, այնպես էլ ի վնաս ներդրողի:

- Ռիսկ, անմիջականորեն կապված երկրի սոցիալ-տնտեսական զարգացվածության մակարդակի հետ, համաշխարհային տնտեսական համակարգում երկրի տեղից և դերից, ինչպես նաև տիրող քաղաքական իրավիճակից, ինչը կարող է ազդել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, որն էլ իր հերթին կարող է բերել ներդրողի ակտիվների կորուստի:
- Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում. Բանկն ի վիճակի չի լինի շուկայում իրացնել ներդրողի ակտիվները ցանկալի ծավալով կամ ստիպված կլինի վաճառել ավելի ցածր գնով, ինչը կապված է ներդրողի գործիքի նկատմամբ պահանջարկի նվազման հետ:
- Օրենսդրական փոփոխությունների ռիսկը՝ պետական իշխանության, շուկաները կարգավորող մարմինների գործունեության, դատական, բանկային և արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության փոփոխության հետևանքով էական վնաս կրելու հավանականությունն է:
- Ինֆլյացիոն ռիսկը՝ կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման, ապա նաև կտրուկ գնաճի արդյունքում: Այլ կերպ ասած՝ ապագա գնաճը կբերի դրամական հոսքերի գնողունակության անկման: Գնաճի առկայության պայմաններում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրենց կողմից ստացվելիք իրական եկամտաբերությունը կարող է ավելի ցածր լինել (գնաճի չափով), քան թողարկողի կողմից առաջարկվող անվանական եկամտաբերությունը:
- Գործառնական ռիսկեր՝ կապած համակարգի անսարքության, խափանման, անվտանգության հետ:

Ուշադրություն
Պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՍՊԱՌՈՂԸ: Ֆինանսական կազմակերպությունը ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ սպառողի վնասները, եթե դրանք չեն պատճառվել ֆինանսական կազմակերպության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

Հայտ-հանձնարարականի ներկայացման կարգ

1. Ներդրողի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների իրականացման համար հիմք է հանդիսանում Հայտ-հանձնարարականը:

1.1. Մինչև ժամը 14:00 ներկայացված հայտերը համարվում են Բանկի կողմից ընդունված նույն բանկային օրը և Բանկի կողմից ընդունվում են ի կատարումն նույն աշխատանքային օրը:

1.2. Ժամը 14:00-ից հետո ներկայացված հայտերը համարվում են ընդունված հաջորդ աշխատանքային օրը և Բանկի կողմից ընդունվում են ի կատարումն հաջորդ աշխատանքային օրը:

2. Ներդրումային ծառայություններից օգտվելու հանձնարարականները պետք է ներկայացվեն ներդրողի կողմից հետևյալ եղանակներով.

2.1. *Թղթային եղանակով:* Թղթային հայտը ներկայացվում է Բանկ առձեռն, 2 օրինակից ներդրողի ստորագրությամբ, իրավաբանական անձի դեպքում՝ նաև կնիքված (կնիքի առկայության դեպքում): Հայտի 1 բնօրինակը պահվում է Բանկում, մյուսը տրամադրվում է ներդրողին: Հայտը համարվում է ընդունված Բանկի կողմից, համապատասխան աշխատակցի կողմից հայտը ընդունելու մասին նշում կատարելու դեպքում:

2.2. *Էլեկտրոնային եղանակով:* Ներդրողը, հայտի լուսապատճենը՝ ստորագրված և իրավաբանական անձի դեպքում՝ կնքված (կնիքի առկայության դեպքում), ուղարկում է՝

- «Ինտերնետ-Բանկ» համակարգով,
- «Converse Mobile» հավելվածով,
- պայմանագրում նշված իրավասու հասցեից պայմանագրում նշված Սի-Բի-Էյ-Նեթ և/կամ իրավասու էլեկտրոնային հասցեներին:

Հայտը համարվում է ընդունված այդ մասին Բանկի կողմից էլեկտրոնային հաղորդագրության ընդունված լինելու մասին համակարգի պատասխան հաղորդագրության առաքման պահից:

2.3. *Հեռախոսազանգի միջոցով:* Հեռախոսային հրահանգներ ներդրողը կարող է տալ միայն այդ մասին Բանկի հետ նախնական պայմանավորվածության առկայության դեպքում: Հեռախոսային հայտի դեպքում ներդրողը հաստատում է իր անձը՝ նշելով բանկային գաղտնաբառը, Բանկի պատասխանատու աշխատակցի պահանջով՝ նաև այլ տվյալներ:

3. Գործարքն իրականացնելու համար ներդրողը նշում է ֆինանսական գործիքի տարբերակիչ ծածկագիրը /ISIN/ և տալիս է առքի և/կամ վաճառքի հրահանգ, շուկայական կամ ոչ շուկայական գներով (լիմիտ, ստոպ),

նախօրոք ստանալով Բանկի աշխատակցից առքի և/կամ վաճառքի տվյալ պահի համար սահմանված գինը/եկամտաբերությունը:

4. Հեռախոսազանգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքում ներդրողի պատվերը ձայնագրվում է:
5. Ներդրողը կարող է հետ կանչել իր կողմից Բանկին տրված հայտը կամ կատարել գործարքի պայմանների փոփոխություն՝ մինչև Բանկի կողմից պատվերի կատարման նպատակով որևէ գործարք կամ գործողություն կատարելը: Հայտի հետ կանչման կամ փոփոխության մասին հաղորդագրությունը ներդրողը ներկայացնում է Բանկ՝ **2-րդ** կետով նշված տարբերակներից որևէ մեկով:
6. Բանկը կարող է մերժել կամ չընդունել ներդրողի կողմից ներկայացված հայտը, եթե
   6.1. այն չի համապատասխանում պայմանագրի և ՀՀ օրենսդրության պահանջներին,
   6.2. դրա հետ կանչումը շուկայական իրավիճակից ելնելով (եթե մինչև հաճախորդի հետ կանչելը Բանկը գործարքը կատարած լինի, կամ տեխնիկապես հայտի չեղարկման հնարավորություն չունենա) Բանկի համար անհնարին է,
   6.3. ներդրողի հաշիվներում առկա չեն հայտում նշված գործարքի ծավալի չափով դրամական միջոցները (ներառյալ գործարքի կնքման համար անհրաժեշտ միջնորդավճարները) և/կամ արժեթղթեր, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,
   6.4. ներդրողի արժեթղթերը կամ դրամական միջոցները արգելադրված են կամ ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով,
   6.5. հայտը լրացված է ոչ պատշաճ ձևով՝ սխալներով, ջնջումներով, ընդունված ձևաթղթին ոչ համապատասխան և այլն:
7. Հայտը մերժելու կամ չընդունելու դեպքում Բանկն անմիջապես այդ մասին տեղեկացնում է ներդրողին՝ համապատասխան հաղորդագրություն ուղարկելու կամ թղթային հայտի վրա նշում կատարելու միջոցով:

Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում (ներառյալ ԱԱՀ)		
Հաշվից քաղվածքի տրամադրում մեկ անգամ	**Ըստ յուրաքանչյուր գործարքի**	**Պարբերական (ամսական)**
Էլեկտրոնային	0 ՀՀ դրամ	0 ՀՀ դրամ
Թղթային	0 ՀՀ դրամ	0 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվից քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)՝ նախորդ կետում սահմանված պարբերականությունից բացի		
Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում (այդ թվում՝ ըստ յուրաքանչյուր դասի)		1,200 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում		1,200 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում		2,400 ՀՀ դրամ
Հաշվետվություն արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ		1,200 ՀՀ դրամ
Հաշվետիրոջ հարցման հիման վրա արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում հիմքերով		
Էլեկտրոնային եղանակով		6,000 ՀՀ դրամ
Առձեռն		12,000 ՀՀ դրամ
Փաստաթղթերի, քաղվածքների կամ այլ առաքում (ներառյալ ԱԱՀ)		
Ներհանրապետական		
Ֆիզիկական անձանց համար	0	
Իրավաբանական անձանց համար	500 ՀՀ դրամ	
Միջազգային		
Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին	
Այլ դեպքերում	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին + 1,500 ՀՀ դրամ	
Պատվիրակված առաքման ծառայության միջոցով		
Ներհանրապետական	3,000 ՀՀ դրամ	
Միջազգային	Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության սահմանած սակագին + 5,000 ՀՀ դրամ	

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում է հայերեն և անգլերեն լեզուներով, որի փոխանցման ձևը և պարբերականությունը համաձայնեցվում է ներդրողի հետ:

Տեղեկատվությունը համարվում է ընդունված, եթե տրամադրումից երկու աշխատանքային օրվա ընթացքում ներդրողը առարկություն չի ներկայացնում ստացված տեղեկատվության վերաբերյալ:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1.	Ներդրողի հայտ-հանձնարարական գործարքների իրականացման վերաբերյալ:
2.	Ներդրողի կողմից որակավորված ներդրող գրանցվելու դիմում (այդպիսին հանդիսանալու դեպքում):
3.	Որակավորված ներդրողների տեղեկատվական բազայի գրանցումից հանելու դիմում (անհրաժեշտության դեպքում):
4.	Հայտարարություն Լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների ռիսկայնության տեղեկացվածության վերաբերյալ:
5.	Պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող իրավաբանական անձինք, մինչև պայմանագիր կնքելը պետք է Բանկ ներկայացնեն ներքոնշյալ կետերից առնվազն երկուսին համապատասխանող փաստաթղթեր՝
5.1.	*տեղեկանք, որտեղ նշված է պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը (տնօրենի և/կամ գլխավոր հաշվապահի ստորագրությամբ և կնքված) և ներկայացված տարեկան/եռամսյակային հարկային հաշվետվությունը,*
5.2.	*տեղեկանք, որտեղ նշված է պայմանագրի կնքմանը նախորդող ամսվա վերջի դրությամբ անձի ընդհանուր կապիտալը (տնօրենի և/կամ գլխավոր հաշվապահի ստորագրությամբ և կնքված) և ներկայացված տարեկան/եռամսյակային հարկային հաշվետվությունը,*
5.3.	*տեղեկանք, որտեղ նշված է պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված անձի իրացման շրջանառությունը (համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի):*
6.	Բանկի պահանջով՝ այլ փաստաթղթեր:
7.	Հաշվարկային կամ ընթացիկ հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումում՝ https://conversebank.am/hy/open-account/:

Ուշադրություն
Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, մանրամասները՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=164950:
Բանկն իրավասու է փոփոխել և լրացնել ծառայության մատուցման պայմանները, «Սակագներ և դրույքները»՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային էջում (www.conversebank.am) հաղորդագրություն հրապարակելով, Բանկի տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, էլ. փոստով ծանուցումն ուղարկելով և/կամ հաճախորդի կողմից ընտրված՝ Բանկի կողմից առաջարկվող այլ եղանակներով տրամադրելու միջոցով, որը համարվում է հաճախորդի պատշաճ իրազեկում:
Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:
Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքած համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
Առանձին դեպքերում, հիմնվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) և թղթակից բանկերի պահանջների վրա, Բանկը կարող է սահմանափակել և/կամ չիրականացնել ծառայության մատուցումը:

Ներդրողը հավաստում է չտրամադրել Բանկից ստացվող տեղեկատվություններն այլ անձանց կամ կազմակերպությունների՝ առանց Բանկի հետ հատուկ համաձայնության:

Ներդրումային ծառայությունների մատուցման վայր

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՅՑԵԼԵԼ ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ և ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ «ԱՎԻԱՑԻԱ» և «ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ:

Շահերի բախման կանխարգելում

Շահերի բախման կանխարգելման դրույթները ներկայացված են **«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Շահերի բախման սահմանափակման հրահանգում»** / IN 54-01/:

Բանկը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և ներդրողի արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Ներդրողի պատվերները կատարելիս Բանկը գործում է ելնելով բացառապես ներդրողի շահերի պաշտպանությունից:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Կապի միջոցներ

- Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1
- Ինտերնետային կայք՝ https://www.conversebank.am
- Էլ. փոստի հասցե՝ investments@conversebank.am, dealingcentre@conversebank.am
- Հեռախոսահամար՝ +374 10 511 211 (ներքին 1248)
  WhatsApp՝ +374 95 511211
  Skype՝ conversebank-callcenter